

Հաստատված է

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Վարչության

<<15>> <<Մայիսի>> 2019

Թիվ 87/01-15.05.19 որոշմամբ

Վարչության նախագահ

----- Ա. Խաչատրյան

*Հրապարակման ամսաթիվը <<15>> <<Մայիսի>> 2019թ.  
Անփոփազրուս նշված պայմանները կարող են փոփոխված լինել,  
մանրամասների համար՝  
Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու*

**ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2019**

1. Անվանումը - <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1

Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am

Կայք – www.aeb.am

Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104)

Ֆաքս - (37410) 53-89-04

**ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ**

<b>Վարկի տեսակը</b>	<<Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին>> պետական նպատակային ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկ		
<b>Վարկի նպատակը</b>	Բնակելի անշարժ գույքի ձեռքբերում		
<b>Վարկի արժույթը</b>	ՀՀ դրամ		
<b>Վարկի գումարը</b>	Առաջնային շուկա 1.000.000-27.750.000 ՀՀ դրամ	Երկրորդային շուկա 1.000.000-22.500.000 ՀՀ դրամ	
<b>Տարեկան տոկոսադրույքը (հաստատուն)</b>	7.3% Վարկ/գրավ հարաբերակցություն՝ մինչև 92.5%	6.8% Վարկ/գրավ հարաբերակցություն՝ մինչև 50%-ը ներառյալ	7.3% Վարկ/գրավ հարաբերակցություն՝ 50-90%
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք</b>	Առաջնային շուկայի դեպքում 8.48-10.5% Երկրորդային շուկայի դեպքում՝ 3.81-8.32%		
<b>Սուբսիդավորվող տոկոսադրույքը</b>	<<Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան>> պետական նպատակային ծրագրի շրջանակներում պետության կողմից կհատկացվի սուբսիդավորում միայն երկրորդային շուկայից բնակարան/բնակելի տուն ձեռք բերելու դեպքում: <ul style="list-style-type: none"> <li>• Երևան քաղաքում անշարժ գույք ձեռք բերելու դեպքում 2%</li> <li>• ՀՀ մարզերում անշարժ գույք ձեռք բերելու դեպքում 4%</li> </ul>		
<b>Վարկի ժամկետը</b>	144 մինչև 240 ամիս		
<b>Կանխավճար</b>	<ul style="list-style-type: none"> <li>• նվազագույնը 20%՝ առաջնային և 30%՝ երկրորդային շուկայի դեպքում, կամ</li> <li>• նվազագույնը 7.5% առաջնային և 10% երկրորդային շուկայի դեպքում, եթե ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք կամ առկա է առաջնային շուկայի դեպքում 80%, իսկ երկրորդային շուկայի դեպքում 70%-ը գերազանցող գումարի չափով կանխավճարի ապահովագրություն:</li> </ul>		
<b>Մարումների հաճախականությունը</b>	Ամսական		
<b>Վարկի մարման կարգը</b>	Ամենամսյա՝ հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված)		
<b>Ապահովվածությունը</b>	Ձեռք բերվող անշարժ գույք (անհրաժեշտության դեպքում նաև այլ բնակելի անշարժ գույք, որը պետք է հանդիսանա համավարկառուի սեփականություն)		
<b>Վարկ հարաբերած գրավի արժեքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Առավելագույնը ձեռք բերվող անշարժ գույքի շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 80%-ը՝ առաջնային շուկայի դեպքում, 70%-ը՝ երկրորդային շուկայի դեպքում,</li> <li>• Առավելագույն գումարը կարող է կազմել ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 90%-ի չափով, եթե տրամադրվող վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր շուկայական արժեքի 80%-ը՝ առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքում և 70% երկրորդային շուկայից բնակարան ձեռք</li> </ul>		

	բերելու դեպքում, կամ առկա է 70%-ը (առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքում՝ 80%-ը) գերազանցող գումարի չափով կանխավճարի ապահովագրություն:
<b>Տրամադրման եղանակը</b>	Կանխիկ կամ անկանխիկ
<b>Կումիսիոն վճարը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 ՀՀ դրամ, որը ենթակա չէ վերադարձման</li> <li>Հաշվի սպասարկման ամսական վճար՝ վարկի պայմանագրային գումարի 0.03%-ի չափով, բայց ոչ ավել քան ամսական 5.000 ՀՀ դրամ</li> </ul>
<b>Վարկի ձևակերպումն իրականացվում է</b>	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի կողմից: Վարկը ներկայացվում է իրավասու մարմնի քննարկմանը, եթե հայտատուն բնակարանի գնահատված շուկայական արժեքի նվազագույնը 10%-ը մուտքագրել է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բացված հաշվին: Մուտքագրված գումարը պահպանվում է հաշվում մինչև վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելը:
<b>Որոշման և տրամադրման ժամանակահատվածը</b>	Մինչև 20 աշխատանքային օր (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում)
<b>Վարկառուի նկատմամբ պահանջները</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ամուսինների գումարային տարիքը չպետք է գերազանցի 70-ը,,</li> <li>Միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 35-ը,</li> <li>Վարկառուի գուտ եկամուտները չպետք է գերազանցեն 800.000 ՀՀ դրամը,</li> <li>Ամուսիններից յուրաքանչյուրը ՀՀ ամբողջ տարածքում չպետք է ունենան 18 քմ-ից ավել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի անշարժ գույք</li> </ul>
<b>Ապահովագրությունը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Անշարժ գույքի ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով նվազագույնը վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18%-ի չափով:</li> <li>Վարկառուի և համավարկառուների (բացառությամբ եկամուտ չունեցող համավարկառուների) դժբախտ պատահարներից ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով նվազագույնը վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> </ul> <p>Կանխավճարի տարեկան ապահովագրավճարը հաշվարկվում է ապահովագրական գումարի 1.8%-ի չափով (այս սակագինը գործում է այն դեպքում, եթե հաճախորդի կողմից &lt;&lt;Միլ Ինչուրանս&gt;&gt; ԱՓԲԸ-ի հետ կնքվեն և կվերակնքվեն նաև ապահովագրության վկայագրեր՝ ձեռքբերվող անշարժ գույքի և վարկառուի/համավարկառուի դժբախտ պատահարներից ապահովագրության տեսակների գծով, հակառակ դեպքում սակագինը սահմանվում է 2%-ի չափով):</p>
<b>Անշարժ գույքի գնահատումը</b>	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով (20.000ՀՀ դրամ):
<b>Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր</b>	Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում, անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում գրանցում) կատարվում են վարկառուի կողմից <ul style="list-style-type: none"> <li>Նոտարական վճար՝ 15.000-25.000 ՀՀ դրամ,</li> <li>միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ,</li> <li>անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 27.000-75.000 ՀՀ դրամ:</li> </ul>
<b>Ձեռք բերվող անշարժ գույքը</b>	ՀՀ տարածքում գնվող բնակելի անշարժ գույքի (բնակարան, բնակելի տուն) ձեռք բերման արժեքը չպետք է գերազանցի 30 մլն ՀՀ դրամը՝ առաջնային շուկային դեպքում և 25 միլիոն ՀՀ դրամը՝ երկրորդային շուկայի դեպքում և միննույն ժամանակ գնահատված արժեքը չպետք է գերազանցի համապատասխանաբար 31 մլն և 26 մլն ՀՀ դրամը:
<b>Բացասական որոշման հիմքերը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը,</li> <li>Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,</li> </ul>

- «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի չափորոշիչներին չհամապատասխանելը,
- Հաճախորդի բացասական վարկային պատմությունը,
- Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կյտնընդոտեն վարկի մարմանը

**Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը**

1. Անձնագրերի պատճեններ /ընտանիքի անդամների/,
2. Վարկառուի և ամուսնու/կնոջ/ ծննդյան վկայականների պատճեն
3. Ամուսնության վկայականի պատճեն/առկայության դեպքում/,
4. Տեղեկանք աշխատավայրից /անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն նախորդ 12 ամսվա ընթացքում վճարված գուտ աշխատավարձի, եկամտահարկի, սոցապ. վճարումների չափերի և աշխատանքային գրքույկի պատճեններ,
5. Վարկառուի և համավարկառուի /ների/ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք /ներ/ հարկային մարմնից,
6. Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
7. Սեփականության վկայականի պատճեն, /գնվող բնակարանի, անհրաժեշտության դեպքում վկայականի տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենը/,
8. Տեղեկանք, որ տվյալ բնակարանը արգելանքի տակ չէ, (բնօրինակը և 1 պատճեն), ներկայացնել վարկի հաստատումից հետո,
9. Վաճառողի (սեփականատերերի) անձնագրի պատճենը
10. Ձեռքբերվող բնակարանի 3-րդ ձև /անձնագրային սեղանից/
11. Դիպլոմի պատճեն (առկայության դեպքում),
12. Կադաստրի տեղեկատվական կենտրոնից տեղեկանք՝ հայտատուի և ամուսնու/կնոջ ՀՀ ամբողջ տարածքում ունեցած անշարժ գույքերի վերաբերյալ:

**Ուշադրություն.** Համավարկառու կարող է հանդիսանալ վարկառուի ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ մի քանիսը:

**Ուշադրություն.** Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

**Ուշադրություն.** Վարկառուն կարող է գրկվել բնակարանի նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի Հիփոթեքային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

**Ուշադրություն.** Հիփոթեքային պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով:

**Ուշադրություն.** Վարկի ամսական սպասարկման վճարը կարող է չգնաձվել, եթե վարկի տարեկան տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով բարձր լինի սահմանված տոկոսադրույքից:

**Ուշադրություն.** Վարկառուի և համավարկառու/ներ/ի վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր վարկերի/գործող և մարված/ գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը:

**ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ (ՁԵՆՔԲԵՐՈՒՄ)**

Վարկի տեսակը	Հիփոթեքային վարկ		
Վարկի նպատակը	Բնակելի անշարժ գույքի ձեռքբերում		
Վարկի արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո /արտարժույթով վարկերի մարումների վրա կարող են ազդել փոխարժեքի տատանումները, որի ռիսկը կրում էք Դուք/		
Վարկի գումարը	ՀՀ դրամով տրամադրելու դեպքում 1.000.000 ՀՀ դրամից մինչև 60 մլն ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով/Եվրոյով տրամադրելու դեպքում նվազագույնը 2.000 ԱՄՆ դոլար/Եվրո		
Տարեկան տոկոսադրույքը (հաստատուն)	ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում՝		
	Վարկ/գրավ հարաբերակցություն	ԱՄՆ դոլար	Եվրո
	Մինչև 50% ներառյալ	10.5%	9.5%
	50-90% ներառյալ	11%	10%
	ՀՀ դրամով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում՝		
Վարկի գումար	Վարկ/ գրավ հարաբերակցություն	Տարեկան տոկոսադրույք	

1.000.000 ՀՀ դրամից մինչև 35.000.000 ՀՀ դրամ գումարի չափով	Մինչև 50% ներառյալ	9.8%
	50-90% ներառյալ	10.3%
35.000.001-60.000.000 ՀՀ դրամ գումարի չափով	Մինչև 90% ներառյալ	12.3%
<p>&lt;&lt;Ազգային հիփոթեքային ընկերություն&gt;&gt; ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորվող, Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլի շրջանակներում ՀՀ մարզերում բնակելի անշարժ գույքի կամ Երևան քաղաքում էներգաարդյունավետ բազմաբնակարան շենքում անշարժ գույքի ձեռք բերման նպատակով 1.000.000 ՀՀ դրամից մինչև 25.000.000 ՀՀ դրամ գումարի չափով տրամադրվող հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը կարող է սահմանվել 1% ցածր տոկոսային կետով:</p>		
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք</b>	ՀՀ դրամով՝ 11.09-14.26% Արտարժույթով՝ 10.62-15.05%	
<b>Վարկի ժամկետը</b>	ՀՀ դրամի դեպքում՝ 144 մինչև 240 ամիս ԱՄՆ դոլարի, Եվրոյի դեպքում՝ 120-180 ամիս	
<b>Մարումների հաճախականությունը</b>	Ամսական	
<b>Վարկի մարման կարգը</b>	Ամենամսյա՝ հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված)	
<b>Ապահովվածությունը</b>	Ձեռք բերվող անշարժ գույք (անհրաժեշտության դեպքում նաև այլ բնակելի անշարժ գույք)	
<b>Կանխավճար</b>	<p>ՀՀ դրամի դեպքում նվազագույնը 30% կամ նվազագույնը 10%, եթե</p> <ul style="list-style-type: none"> <li>• ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, կամ</li> <li>• առկա է վարկ/գրավ հարաբերակցության 70%-ը գերազանցող գումարի չափով կանխավճարի ապահովագրություն:</li> </ul> <p>ԱՄՆ դոլարի/Եվրոյի դեպքում նվազագույնը 30% կամ նվազագույնը 0%, եթե ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք:</p>	
<b>Վարկ հարաբերած գրավի արժեքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Առավելագույնը ձեռք բերվող անշարժ գույքի շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 70%-ը</li> <li>• ՀՀ դրամով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում վարկի առավելագույն գումարը կարող է կազմել ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 90%-ի չափով, եթե տրամադրվող վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր շուկայական արժեքի 70%-ը կամ առկա է 70%-ը գերազանցող գումարի չափով կանխավճարի ապահովագրություն:</li> <li>• Բնակելի անշարժ գույքի ձեռքբերման նպատակով ԱՄՆ դոլարով/Եվրոյով հիփոթեքային վարկեր տրամադրելու դեպքում վարկի առավելագույն գումարը կարող է կազմել ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 100%-ի չափով, եթե տրամադրվող վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրվող անշարժ գույքերի ընդհանուր շուկայական արժեքի 70%-ը:</li> </ul>	
<b>Տրամադրման եղանակը</b>	Կանխիկ կամ անկանխիկ	
<b>Կումիսիոն վճարը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 ՀՀ դրամ, որը ենթակա չէ վերադարձման</li> </ul>	

	<ul style="list-style-type: none"> <li>• Հաշվի սպասարկման ամսական վճար՝ վարկի պայմանագրային գումարի 0.03%-ի չափով, բայց ոչ ավել քան ամսական 5.000 ՀՀ դրամ: ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկի Հաշվի սպասարկման վճարը մարման գրաֆիկում ներառվում է դրամային արտահայտությամբ՝ հաշվարկելով վարկային պայմանագրի կնքման օրվա համար ԿԲ-ի կողմից նախորդ աշխատանքային օրը սահմանած միջին փոխարժեքով: Հաշվի սպասարկման ամսական վճարը կլորացվում է դեպի վեր՝ մինչև հարյուրապատիկը:</li> </ul>
<b>Վարկի ձևակերպումն իրականացվում է</b>	<p>«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի կողմից:</p> <p>Վարկը ներկայացվում է իրավասու մարմնի քննարկմանը, եթե հայտատուն բնակարանի գնահատված շուկայական արժեքի նվազագույնը 10%-ը մուտքագրել է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բացված հաշվին: Մուտքագրված գումարը պահպանվում է հաշվում մինչև վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելը:</p>
<b>Որոշման և տրամադրման ժամանակահատվածը</b>	Մինչև 20 աշխատանքային օր (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում)
<b>Վարկառուի նկատմամբ պահանջները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• 18 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ,</li> <li>• Գրանցված և բնակվող Հայաստանի Հանրապետությունում,</li> <li>• Ունի բանկի համար ընդունելի մշտական եկամտի աղբյուր:</li> </ul>
<b>Ապահովագրությունը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Անշարժ գույքի ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> <li>• Վարկառուի և համավարկառուների (բացառությամբ եկամուտ չունեցող համավարկառուների) դժբախտ պատահարներից ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> </ul> <p>Կանխավճարի տարեկան ապահովագրավճարը հաշվարկվում է ապահովագրական գումարի 2.7%-ի չափով (այս սակագինը գործում է այն դեպքում, եթե հաճախորդի կողմից &lt;&lt;Միլ Ինչուրանս&gt;&gt; ԱՓԲԸ-ի հետ կնքվեն և կվերակնքվեն նաև ապահովագրության վկայագրեր՝ ձեռքբերվող անշարժ գույքի և վարկառուի/համավարկառուի դժբախտ պատահարներից ապահովագրության տեսակների գծով, հակառակ դեպքում սակագինը սահմանվում է 3%-ի չափով), բայց ոչ պակաս քան 72,000 ՀՀ դրամը: Նշված նվազագույն ապահովագրական վճարի չափը գործում է միայն ապահովագրության առաջին տարվա համար:</p>
<b>Անշարժ գույքի գնահատումը</b>	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով (20.000 ՀՀ դրամ):
<b>Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր</b>	<p>Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում, անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում գրանցում) կատարվում են վարկառուի կողմից՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նոտարական վճար՝ 15.000-25.000 ՀՀ դրամ,</li> <li>• միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ,</li> <li>• անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 27.000-75.000 ՀՀ դրամ:</li> </ul>
<b>Ձեռք բերվող անշարժ գույքը</b>	ՀՀ տարածքում գնվող բնակելի անշարժ գույք (բնակարան, բնակելի տուն)
<b>Բացասական որոշման հիմքերը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը,</li> <li>• Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,</li> <li>• Հաճախորդի բացասական վարկային պատմությունը,</li> <li>• Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը</li> </ul>
<b>Ֆիզիկական անձանց կողմից</b>	1. Անձնագրերի պատճեններ /ընտանիքի անդամների/,

**ներկայացվող փաստաթղթերը**

2. Ամուսնության վկայականի պատճեն /առկայության դեպքում,
3. Տեղեկանք աշխատավայրից /անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն նախորդ 12 ամսվա ընթացքում վճարված գուտ աշխատավարձի, եկամտահարկի, սոցապ. վճարումների չափերի և աշխատանքային գրքույկի պատճեններ,
4. Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
5. Սեփականության վկայականի պատճեն, /գնվող բնակարանի, անհրաժեշտության դեպքում վկայականի տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճեն/,
6. Տեղեկանք, որ տվյալ բնակարանը արգելանքի տակ չէ, (բնօրինակը և 1 պատճեն), ներկայացնել վարկի հաստատումից հետո,
7. Վաճառողի (սեփականատերերի) անձնագրի պատճենը
8. Ձեռքբերվող բնակարանի 3-րդ ձև /անձնագրային սեղանից/
9. Դիպլոմի պատճեն (առկայության դեպքում),

**Ուշադրություն :** Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

**Ուշադրություն.** Համավարկառու կարող է հանդիսանալ վարկառուի ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ մի քանիսը:

**Ուշադրություն.** Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

**Ուշադրություն.** Վարկառուն կարող է գրկվել բնակարանի նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի Հիփոթեքային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

**Ուշադրություն.** Հիփոթեքային պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով:

**Ուշադրություն.** Վարկի ամսական սպասարկման վճարը կարող է չգնաձվել, եթե վարկի տարեկան տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով բարձր լինի սահմանված տոկոսադրույքից:

**Ուշադրություն.** Վարկառուի և համավարկառու/ներ/ի վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր վարկերի/գործող և մարված/ գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը:

**ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ (ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ)**

<b>Վարկի տեսակը</b>	Հիփոթեքային վարկ		
<b>Վարկի նպատակը</b>	Բնակելի անշարժ գույքի վերանորոգում կամ կառուցապատում		
<b>Վարկի արժույթը</b>	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո /արտարժույթով վարկերի մարումների վրա կարող են ազդել փոխարժեքի տատանումները, որի ռիսկը կրում էք Դուք/		
<b>Վարկի գումարը</b>	ՀՀ դրամով տրամադրելու դեպքում <b>1.000.000</b> ՀՀ դրամից մինչև <b>60</b> մլն ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով տրամադրելու դեպքում նվազագույնը <b>2.000</b> ԱՄՆ դոլար/Եվրո Բնակելի տների կառուցման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում վարկի առավելագույն գումարը չպետք է գերազանցի ներկայացված կառուցման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80%-ը		
<b>Տարեկան տոկոսադրույքը (հաստատուն)</b>	ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում՝		
	Վարկ/գրավ հարաբերակցություն	ԱՄՆ դոլար	Եվրո
	Մինչև 50% ներառյալ	10.5%	9.5%
	50-90% ներառյալ	11%	10%
	ՀՀ դրամով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում՝		
Վարկի գումար	Վարկ/ գրավ հարաբերակցություն	Տարեկան տոկոսադրույք*	
1.000.000 ՀՀ դրամից մինչև 35.000.000 ՀՀ դրամ գումարի չափով	Մինչև 50% ներառյալ	10.5%	
	50-70% ներառյալ	11%	
35.000.001-60.000.000 ՀՀ դրամ գումարի չափով	Մինչև 70% ներառյալ	12.5%	
<<Ազգային հիփոթեքային ընկերություն>> ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորվող, Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլի շրջանակներում ՀՀ մարզերում բնակելի անշարժ գույքի վերանորոգման			

	(նվազագույնը 2.000.000 ՀՀ դրամ), կառուցապատման նպատակով 1.000.000 ՀՀ դրամից մինչև 25.000.000 ՀՀ դրամ գումարի չափով տրամադրվող հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը սահմանել 1% ցածր տոկոսային կետով:
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք</b>	ՀՀ դրամով՝ 11.87-15.47% Արտարժույթով՝ 10.62-15.47%
<b>Վարկի ժամկետը</b>	ՀՀ դրամի դեպքում՝ 144 մինչև 240 ամիս ԱՄՆ դոլարի/Եվրոյի դեպքում՝ 120-180 ամիս
<b>Մարումների հաճախականությունը</b>	Ամսական
<b>Վարկի մարման կարգը</b>	Ամենամսյա՝ հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված)
<b>Ապահովվածությունը</b>	Վերանորոգվող անշարժ գույք, կառուցապատման դեպքում՝ այլ բնակելի անշարժ գույք
<b>Վարկ հարաբերած գրավի արժեքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Բնակելի անշարժ գույքի վերանորոգման դեպքում վերանորոգվող կամ գրավադրվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի առավելագույնը 70%-ի չափով</li> <li>• Բնակելի անշարժ գույքի կառուցապատման դեպքում գրավադրվող անշարժ գույքերի գնահատված շուկայական արժեքների առավելագույնը 70%-ի չափով</li> </ul>
<b>Տրամադրման եղանակը</b>	Փուլերով Կանխիկ կամ անկանխիկ Բնակելի անշարժ գույքի վերանորոգման նպատակով տրամադրված վարկերի դեպքում յուրաքանչյուր փուլի գումարի օգտագործման համար սահմանվում է առավելագույնը 40 օրացույցային օր: □ Բնակելի անշարժ գույքի կառուցապատման նպատակով տրամադրված վարկերի դեպքում յուրաքանչյուր փուլի գումարի օգտագործման համար սահմանվում է առավելագույնը 150 օրացույցային օր:
<b>Կոմիսիոն վճարը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 ՀՀ դրամ, որը ենթակա չէ վերադարձման</li> <li>• Հաշվի սպասարկման ամսական վճար՝ վարկի պայմանագրային գումարի 0.03%-ի չափով, բայց ոչ ավել քան ամսական 5.000 ՀՀ դրամ: ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկի Հաշվի սպասարկման վճարը մարման գրաֆիկում ներառվում է դրամային արտահայտությամբ՝ հաշվարկելով վարկային պայմանագրի կնքման օրվա համար ԿԲ-ի կողմից նախորդ աշխատանքային օրը սահմանած միջին փոխարժեքով: Հաշվի սպասարկման ամսական վճարը կլորացվում է դեպի վեր՝ մինչև հարյուրապատիկը:</li> </ul>
<b>Վարկի ձևակերպումն իրականացվում է</b>	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի կողմից:
<b>Որոշման և տրամադրման ժամանակահատվածը</b>	Մինչև 20 աշխատանքային օր (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում)
<b>Վարկառուի նկատմամբ պահանջները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• 18 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ,</li> <li>• Գրանցված և բնակվող Հայաստանի Հանրապետությունում,</li> <li>• Ունի բանկի համար ընդունելի մշտական եկամտի աղբյուր:</li> </ul>
<b>Ապահովագրությունը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Անշարժ գույքի ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> <li>• Վարկառուի և համավարկառուների (բացառությամբ եկամուտ չունեցող համավարկառուների) դժբախտ պատահարներից ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> </ul>
<b>Անշարժ գույքի գնահատումը</b>	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով, (20.000 ՀՀ դրամ):
<b>Գրավի ձևակերպման հետ</b>	Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում,



կապված ծախսեր	անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում գրանցում) կատարվում են վարկառուի կողմից՝ <ul style="list-style-type: none"> <li>• Նոտարական վճար՝ 15.000ՀՀ դրամ,</li> <li>• միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ,</li> <li>• անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 27.000ՀՀ դրամ:</li> </ul>
Բացասական որոշման հիմքերը	<ul style="list-style-type: none"> <li>• Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը,</li> <li>• Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,</li> <li>• Հաճախորդի բացասական վարկային պատմությունը,</li> <li>• Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կյուրնդոտեն վարկի մարմանը</li> </ul>
Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	<ol style="list-style-type: none"> <li>1. Անձնագրերի պատճեններ /ընտանիքի անդամների/, 2</li> <li>2. Ամուսնության վկայականի պատճեն /առկայության դեպքում/</li> <li>3. Տեղեկանք բնակավայրից,</li> <li>4. Տեղեկանք աշխատավայրից /անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն նախորդ 12 ամսվա ընթացքում վճարված գուտ աշխատավարձի, եկամտահարկի, սոցապ. վճարումների չափերի և աշխատանքային գրքույկի պատճեններ,</li> <li>5. Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,</li> <li>6. Սեփականության վկայականի պատճեն, /գնվող բնակարանի, անհրաժեշտության դեպքում վկայականի տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենը/,</li> <li>7. Վերանորոգման /Կառուցման/ ծախսերի նախահաշիվ /ծախսերը ըստ հոդվածների/</li> <li>8. Վերականգնվող անշարժ գույքի լուսանկարներ /մանրամասն/</li> <li>9. Տեղեկանք, որ տվյալ բնակարանը արգելանքի տակ չէ, (բնօրինակը և 1 պատճեն), <u>ներկայացնել վարկի հաստատումից հետո</u>,</li> <li>10. Դիպլոմի պատճեն (առկայության դեպքում),</li> </ol>

**Ուշադրություն :** Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

**Ուշադրություն.** Համավարկառու կարող է հանդիսանալ վարկառուի ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ մի քանիսը:

**Ուշադրություն.** Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

**Ուշադրություն.** Վարկառուն կարող է գրկվել բնակարանի նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի Հիփոթեքային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

**Ուշադրություն.** Հիփոթեքային պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով:

**Ուշադրություն.** Վարկի ամսական սպասարկման վճարը կարող է չգնաձվել, եթե վարկի տարեկան տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով բարձր լինի սահմանված տոկոսադրույքից:

**Ուշադրություն.** Վարկառուի և համավարկառու/ներ/ի վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր վարկերի/գործող և մարված/ գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը:

**ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՎԱՐԿ**

Վարկի տեսակը	Հիփոթեքային
Վարկի նպատակը	Բնակելի անշարժ գույքի էներգաարդյունավետ վերանորոգում
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի գումարը	4000-10.000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ («Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից արդեն իսկ ներգրավված միջոցների I-ին տրանջի համար սահմանվել է <b>2.200.001-5.500.000</b> ՀՀ դրամ)
Տարեկան տոկոսադրույքը (հաստատուն)	11%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	12.8-13.4%
Վարկի ժամկետը	120 ամիս
Արտոնյալ ժամանակահատված	6 ամսից մինչև 2 տարի
Դրամաշնորհ	Վարկառուն ստանում է վարկի պայմանագրային գումարի 5%-ի չափով

	դրամաշնորհ, որն ուղղվում է մայր գումարի մարմանը, եթե բավարարված են Ծրագրի շրջանակներում ընդունելի էներգաարդյունավետ նյութերի/պարագաների (չափաբաժնի և ցանկի) նկատմամբ ներկայացվող պահանջները, և վերանորոգման արդյունքում էներգախնայողության ցուցանիշը կազմում է նվազագույնը 40%:
<b>Մարումների հաճախականությունը</b>	Ամսական
<b>Վարկի մարման կարգը</b>	Ամենամսյա հավասարաչափ (անուիտետային)
<b>Ապահովվածությունը</b>	Վերանորոգվող անշարժ գույք: Կարող է գտնվել ՀՀ ամբողջ տարածքում, բացառությամբ Երևանի Կենտրոն համայնքի:
<b>Վարկ հարաբերած գրավի արժեքը</b>	Վերանորոգվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի առավելագույնը 70%-ի չափով
<b>Տրամադրման եղանակը</b>	Փուլերով Կանխիկ կամ անկանխիկ
<b>Կռմիսիոն վճարը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 ՀՀ դրամ, որը ենթակա չէ վերադարձման</li> <li>Հաշվի սպասարկման ամսական վճար՝ վարկի պայմանագրային գումարի 0.03%-ի չափով, բայց ոչ ավել քան 5.000 ՀՀ դրամը</li> </ul>
<b>Վարկի ձևակերպումն իրականացվում է</b>	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի կողմից:
<b>Որոշման և տրամադրման ժամանակահատվածը</b>	Մինչև 20 աշխատանքային օր (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում)
<b>Վարկառուի նկատմամբ պահանջները</b>	<ul style="list-style-type: none"> <li>18 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ,</li> <li>Գրանցված և բնակվող Հայաստանի Հանրապետությունում,</li> <li>Ունի բանկի համար ընդունելի մշտական եկամտի աղբյուր,</li> <li>Վարկառու/համավարկառուն պետք է լինի վերանորոգվող անշարժ գույքի առնվազն համասեփականատեր</li> </ul>
<b>Ապահովագրությունը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Անշարժ գույքի ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> <li>Վարկառուի և համավարկառուների (բացառությամբ եկամուտ չունեցող համավարկառուների) դժբախտ պատահարներից ապահովագրություն կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունում, վերջինիս կողմից սահմանված սակագնով վարկի մնացորդի հաշվարկով: Սակագները տատանվում են վարկի մնացորդի 0.16-0.18% -ի չափով:</li> </ul>
<b>Անշարժ գույքի գնահատումը</b>	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով (20.000 ՀՀ դրամ):
<b>Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր</b>	Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում, անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում գրանցում) կատարվում են վարկառուի կողմից՝ <ul style="list-style-type: none"> <li>Նոտարական վճար՝ 15.000-25.000 ՀՀ դրամ,</li> <li>միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ,</li> <li>անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 27.000 ՀՀ դրամ:</li> </ul>
<b>Բացասական որոշման հիմքերը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը,</li> <li>Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,</li> <li>Հաճախորդի բացասական վարկային պատմությունը,</li> <li>Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը</li> </ul>
<b>Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը</b>	<ol style="list-style-type: none"> <li>Անձնագրերի պատճեններ /ընտանիքի անդամների/, ,</li> <li>Ամուսնության վկայականի պատճեն /առկայության դեպքում/,</li> <li>Տեղեկանք բնակավայրից,</li> <li>Տեղեկանք աշխատավայրից /անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն նախորդ 12 ամսվա ընթացքում վճարված գուտ</li> </ol>

- աշխատավարձի, եկամտահարկի, սոցալ. վճարումների չափերի և աշխատանքային գործույկի պատճեններ,
5. Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
  6. Սեփականության վկայականի պատճեն, /գնվող բնակարանի, անհրաժեշտության դեպքում վկայականի տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենը/,
  7. Տեղեկանք, որ տվյալ բնակարանը արգելանքի տակ չէ, (բնօրինակը և 1 պատճեն), ներկայացնել վարկի հաստատումից հետո,
  8. Վերականգնվող անշարժ գույքի լուսանկարներ /մանրամասն/
  9. Վերանորոգման ծախսերի նախահաշիվ /ծախսերը ըստ հողվածների/

**Ուշադրություն.** Վարկառուն/համավարկառուն պետք է լինի վերանորոգվող բնակելի անշարժ գույքի առնվազն համասեփականատեր

**Ուշադրություն.** Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

**Ուշադրություն.** Վարկառուն կարող է գրկվել բնակարանի նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի Հիփոթեքային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

**Ուշադրություն.** Հիփոթեքային պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով:

**Ուշադրություն.** Վարկառուի և համավարկառու/ներ/ի վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր վարկերի/գործող և մարված/ գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը:

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Գրավի գնահատումն իրականացվում է անկախ գնահատող լիցենզավորված ընկերությունների կողմից, վերջիններիս կողմից սահմանված սակագներով:

Գնահատող ընկերություններն են՝

Անուն	Հասցե	Հեռախոսահամար
«ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տիգրան Մեծի պող., շենք 49	(096) 52 25 40 (077) 52 25 46
ՀՀ ԱԱՊ «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի փող., 26 շենք	(010) 44 34 36, (010) 44 28 48
«ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող. փակուղի, 8 շենք	(010 - 58 87 97, (099) 58 87 97
«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Արցախի պող., 23/6 շենք	(010) 43 22 76, (096) 43 22 76, (094) 43 22 76
RVM consult ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող., 48/1 շենք, 2-րդ հարկ	(010) 54 64 90, (098) 94 44 49, (077) 94 44 49

Ապահովագրությունը իրականացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերություններում, վերջիններիս կողմից սահմանված սակագներով:

Ապահովագրական ընկերություններն են՝

Անուն	Հասցե	Հեռախոսահամար
"ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ" ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5	(060) 54-00-00, (060) 50-55-44, (010) 58-00-00
«Ինգո Արմենիա» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50	(010) 59 21 21
«ՌԵՍՈ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող., 62 շենք	(060) 27 57 57, (098) 56 07 97

Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումները կրետիտով կամ առանց կրեդիտի կատարելու հանգամանքից փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառված չեն:

1. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԳԻ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

- ՉՎՃԱՐՎԱԾ ՎԱՐԿԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԳՈՒՄԱՐԻ 0,13%-Ի ՉԱՓՈՎ՝ ՕՐԱԿԱՆ
- ՉՎՃԱՐՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ 0,13%-Ի ՉԱՓՈՎ՝ ՕՐԱԿԱՆ
- ՉՎՃԱՐՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԻ 0,13%-Ի ՉԱՓՈՎ՝ ՕՐԱԿԱՆ:

Եթե վարկասնդի նկատմամբ ունեք ՉՄԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ՝

- ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ /ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ/
- ԳՐԱՎԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ /ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ/
- ՏՈՒՅԺԵՐ
- ՏՈԿՈՍՆԵՐ
- ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐ /ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ/
- ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐ:

2. ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՎՐԱ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԿԱՐՈՂ Է ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾՎԵԼ:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ, ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԵՎ/ԿԱՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ(ՆԵՐԻ) ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

4. ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԿԱՐՈՂ Է ԳՐԱՆՑՎԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ: ԴԱ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

5. <<ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՁ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ [www.aeb.am](http://www.aeb.am)>>:

6. ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ: Օրինակ՝ Եթե հաճախորդին տրամադրվել է 1.200.000 ՀՀ դրամ վարկ, տարեկան 24% տոկոսադրույքով, 12 ամիս ժամկետով (ամսեկան տոկոսների հաշվարկի ժամանակ օրերի քանակ հիմք է ընդունվել 30 օր ժամանակահատվածը):

Ամիսներ	Վարկի մնացորդ	Վճարում վարկից	Վճարում տոկոսից
1	1.200.000	100.000	23.671
2	1.100.000	100.000	21.699
3	1.000.000	100.000	19.726
4	900.000	100.000	17.753
5	800.000	100.000	15.781

6	700.000	100.000	13.808
7	600.000	100.000	11.836
8	500.000	100.000	9.863
9	400.000	100.000	7.890
10	300.000	100.000	5.918
11	200.000	100.000	3.945
12	100.000	100.000	1.973

7.ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ: ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ [www.aeb.am](http://www.aeb.am) հասցեում:

8.ՀԻՇԵՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:

9.Տրամադրվող վարկի մեծության որևէ սահմանափակում բանկի կողմից չի կիրառվում, այն պայմանավորված և կապակցված է.

- *Վարկի նպատակից,*
- *Հաճախորդի վարկունակությունից,*
- *Հաճախորդի կողմից առաջարկվող վարկի ապահովվածությունից,*
- *Վարկային ռիսկի գնահատումից,*
- *ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտի պահանջներից:*

10.«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ հաճախորդին կարող է մատուցել ծառայություններ Բանկի ընդհանուր քաղաքականությամբ սահմանված պայմաններից տարբերվող պայմաններով՝ հաշվի առնելով ստորև ներկայացված ցանկի պայմաններից որևէ մեկը.

- *Հաճախորդի հաշվի մնացորդը,*
- *Հաճախորդի հաշվի շարժը,*
- *Բանկի համար հաճախորդի ռազմավարական նշանակությունը,*
- *Հաճախորդ կազմակերպության աշխատակիցների քանակը,*
- *Հաճախորդ կազմակերպությանը տրամադրված քարտերի ընդհանուր քանակը,*
- *Բանկին բերված եկամուտը,*
- *Փոխանցումների ծավալը,*
- *Բանկում ներդրված ավանդների մեծությունը,*
- *Խոշոր վարկառու հանդիսանալը,*
- *Սոցիալական նկատառումները (ուսումնական հաստատություններ բժշկական կազմակերպություններ և այլն),*
- *Վերոնշյալ կազմակերպությունների ղեկավար հանդիսանալ,*
- *Այլ օբյեկտիվ պայմաններ:*

11.Վարկի օգտագործման համար վարկառուն բանկին վճարում է տոկոս, որի հաշվարկը կատարվում է վարկի մնացորդի նկատմամբ, վարկի տրամադրման օրվանից՝ փաստացի օգտագործված օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր: Առանձին ծրագրերի շրջանակներում վարկավորման դեպքում տարին կարող է ընդունվել 360 օր:

- *Տոկոսագումարները վճարվում են վարկային պայմանագրում նշված ժամկետներում:*
- *Տոկոսների վճարման պարբերականությունը սահմանավորվում է վարկային պայմանագրի կամ մարման գրաֆիկի համաձայն:*

- *Եթե վարկի կամ հաշվարկված տոկոսների մարման օրը համընկնում է հանգստյան օրերի հետ, վճարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրերին՝ հանգստյան օրերի համար չհաշվարկելով տույժ:*

## 12. Վարկային պարտավորության մարումները

- *Վարկերը մարվում են այն ժամկետներում, որոնք նշված են վարկային պայմանագրում,*  
- *Վարկերը մարվում են այն արժույթով, որով ձևակերպվել են,*  
- *Արտարժույթային վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա,*  
- *Արտարժույթի փոխարժեքի փոփոխության դեպքում արտարժույթով տրամադրած վարկերի գծով փոխարժեքի փոփոխության ազդեցության ռիսկը կրում է վարկառուն:*

13. Բանկը կարող է դադարեցնել վարկային պայմանագրի գործողությունը և ետ պահանջել վարկի գումարը, եթե.

- *Վարկառուն թերանում է կատարել վարկային պայմանագրով նախատեսված որևէ վճար,*  
- *Վարկառուն խախտում է իր կողմից կատարված որևէ հավաստիացում ու չի վերացնում այդ խախտումը դրա առաջացումից հետո 30 օրվա ընթացքում,*  
- *Եթե պարզվում է, որ վարկառուի կողմից տրված որևէ ներկայացում, երաշխիք, փաստաթուղթ կամ տեղեկություն էսպես թերի է,*  
- *Եթե բանկի հիմնավորված գնահատականով տեղի է ունեցել վարկառուի ֆինանսական վիճակի էական բացասական փոփոխություն, ներառյալ՝ դատական պահանջներ, ակտիվների արտահոսք, բիզնեսի վատթարացում կամ դադարեցում, ընկերության վերակազմավորում,*  
- *Եթե վարկառուն լուծարվում է և նրա նկատմամբ սկսված է կամ վերահաս է սնանկության գործընթաց,*  
- *Եթե վարկառուն խոչընդոտում է մոնիտորինգի անցկացմանը,*  
- *Այլ օրյեկտիվ պատճառների դեպքում:*

14. Բանկի համար որպես գրավի առարկա կարող է հանդիսանալ.

- *Անշարժ գույք՝ հողամասեր, շենքեր, շինություններ, բնակարաններ, առանձնատներ,*  
- *Հիմնական միջոցներ,*  
- *Շրջանառու միջոցներ,*  
- *Ավտոմեքենաներ,*  
- *Թանկարժեք մետաղներ,*  
- *Պետական պարտատոմսեր, արտարժույթ, բաժնետոմսեր,*  
- *Ապագայում ձեռք բերվելիք գույքը եւ իրավունքի գրավը,*  
- *Դրամական միջոցներ:*

15. Գրավադրվող շարժական և անշարժ գույքի համար որպես գնահատման արժեք հիմք է ընդունվում գնահատման հաշվետվությունում առկա լիկվիդացիոն արժեքը:

16. Վարկը կամ դրա մի մասը, ինչպես նաև հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց, եթե պայմանագրով նախատեսված ժամկետներում չեն մարվել:

- Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար Վարկառուն պարտավոր է վճարել Բանկին տույժ՝ ժամկետանց գումարի 0.13 (գրո ամբողջ տասներեք հարյուրերորդական)

տոկոսի չափով: Սույն կետի համաձայն հաշվարկված և չվճարված տույժի հանրագումարը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա վարկի պարտքի մնացորդը:

- Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված վարկի (մասի) նկատմամբ Վարկառուն պարտավոր է վճարել Բանկին տոկոսներ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով: Սույն կետի համաձայն հաշվարկված և չվճարված տոկոսների հանրագումարը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա վարկի պարտքի մնացորդը:
- Անընդմեջ ժամկետանց օրերի 91-րդ օրվանից սկսած ոչ ժամկետանց վարկի (ժամկետային վարկ) մնացորդի նկատմամբ կիրառվում է տարեկան 24 % տոկոսադրույք: Ժամկետանց գումարները և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը, տոկոսները ամբողջությամբ վճարելու հաջորդ օրվանից ժամկետային վարկի նկատմամբ վերականգնվում է Վարկային պայմանագրով սահմանված տոկոսադրույքը:

17. Բանկի համար գրավի առարկա չի կարող հանդիսանալ.

- *Շրջանառությունից հանված գույքը,*
- *Անբաժանելի գույքի առանձին մասերը,*
- *Վարձակալության իրավունքը,*
- *Այլ պայմանագրով արդեն գրավադրված գույքը քաղաքային, գյուղական և թաղային համայնքների,*

18. ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ պահանջները բավարարելու նպատակով գրավ դրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում կարող է տարածվել ԳՐԱՎԱՏՈՒԻ՝ Գրավի պայմանագրով, և ՎԱՐԿԱՌՈՒԻ՝ Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորություններն իրենց պատասխանատվության շրջանակներում չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ սույն կանոնների 2-4 կետերի համաձայն:

2. Արտադատական կարգով գրավադրված գույքն իրացվում է, եթե Գրավի պայմանագրով ԳՐԱՎԱՏՈՒՆ տալիս է իր համաձայնությունը և իրավունք է վերապահում ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻՆ սույն կանոնների 1 կետում նշված բռնագանձման հիմքերն ի հայտ գալու դեպքում գրավադրված անշարժ գույքն իրացնել առանց դատարան դիմելու և իրացման հաշվին բավարարել գրավով ապահովված պահանջն ամբողջ ծավալով, ինչպես նաև՝ գրավադրված անշարժ գույքն առանց դատարան դիմելու հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց ի սեփականություն հանձնել ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻՆ կամ վերջինիս կողմից նշված անձին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն կանոնների 1 կետում նշված բռնագանձման հիմքերն ի հայտ գալու դեպքում ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒՆ գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է ԳՐԱՎԱՏՈՒԻՆ գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում): Բռնագանձման ծանուցումը ԳՐԱՎԱՏՈՒԻՆ հանձնելուց երկու ամիս հետո ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒՆ իրավունք ունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ ԳՐԱՎԱՏՈՒԻ անունից իրացնելու գրավադրված գույքն ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4. Բռնագանձման ծանուցումը ԳՐԱՎԱՏՈՒԻՆ հանձնելուց երկու ամսվա ընթացքում ԳՐԱՎԱՏՈՒՆ պարտավորվում է գրավադրված գույքը հանձնել ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻՆ:

5. Գրավադրված գույքի իրացման գործընթացի տևողությունը չի կարող հիմք հանդիսանալ Վարկային պայմանագրով ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ նկատմամբ ստանձնած ՎԱՐԿԱՌՈՒԻ պարտավորությունների աճի դադարեցման համար: Ընդ որում՝ գրավի առարկայի իրացման գումարի հաշվին մարվում են գրավի առարկայի իրացման օրվա դրությամբ ՎԱՐԿԱՌՈՒԻ նկատմամբ ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ ունեցած ողջ պահանջներն իրենց ամբողջ ծավալով, իսկ

գրավի հաշվին պահանջը չբավարարվելու դեպքում՝ մնացորդ գումարները կարող են բռնագանձվել ՎԱՐԿԱՌՈՒԻ այլ գույքից:

6. ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ պահանջները բավարարելու նպատակով գրավ դրված գույքի նկատմամբ դատական կարգով բռնագանձում կարող է տարածվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: